ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2022 թ. թիվ 345-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 25-ի թիվ 59 որոշման 1-ին կետի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ԳՍ/15.2/32582-2022 հանձնարարականի՝ մարզի վիճակագրական մարմիններին աջակցություն ցուցաբերելու նպատակով

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել հանձնաժողովին 2023 թվականի հունվար ամսին մարզում անցկացնել անասունների հաշվառում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:
3. Համայնքների ղեկավարներին՝ ստեղծել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառում անցկացնող տեղական հանձնաժողովներ՝ ընդգրկելով համայնքների անասնաբույժներին: .

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

05.12.2022

X

ՅԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 5
Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի 05 դեկտեմբերի 2022թ.

թիվ 345-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Վ.Սուքոյան	-	Հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Աչինյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության պետ
Ա.Ամիրխանյան	-	Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
Կ.Մկրտչյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Դիլիջան/
Գ.Վիրաբյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Բերդ/
Ա.Խաչատրյան		-ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Իջևան/
Ն.Հարությունյան	-	ՀՀ ՎԿ Տավուշի մարզային վարչության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի ավագ մասնագետ /Նոյեմբերյան/

Մարզպետարանի գլխավոր քարտուղարի

/ փոխարինող, տեղակալ Ֆելիքս Ափինյան